Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ Գավառի N5 հիմնական դպրոց

Առարկա՝ Շախմատ

Թեմա՝ Դասի պլանավորում: Պլանավորման արդյունավետ եղանակների կարևորությունը:

Վերապատրաստող, մենթոր՝ Գոհար Շահինյան

Ուսուցիչ՝ Ջեմմա Կևեյան

2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3

ԳԼՈՒԽ 1. ՏԵՍԱԿԱՆ ՄԱՍ 6

1. 1. Դասի պլանավորման նախադրյալները 6

1. 2. Դասի կարևոր բաղադրիչները.....8

1.3 Դասի պլանավորման արդյունավետ եղանակների կարևորությունը 9

1. 4. Ուսուցման մանկավարժական և հոգեբանական հիմունքները..... 11

ԳԼՈՒԽ 2. ԳՈՐԾՆԱԿԱՆ ՄԱՍ..... 13

Դասի պլան 1. 13

Դասի պլան 2. 15

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 18

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ……20

“Ոչ բոլորը կդառնան շախմատիստ,

բայց ոչ ոք չի ափսոսա այն ժամանակի

համար,որը տվել է շախմատին: Այն կօգնի

ցանկացած մասնագիտության մեջ’:

Տիգրան Պետրոսյան

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Դասը մանկավարժական գործընթաց է, որը ծառայում է սովորողների կրթության, զարգացման և դաստիարակության խնդիրների լուծման համար: Դասի ճիշտ պլանավորումը կարելի է համարել ուսուցչի մասնագիտական որակներից մեկը:

Դասի պլանավորման ժամանակ պետք է ուսուցիչն իր առջև ունենա ձևավորված նպատակներ և գտնի այդ նպատակներին հասնելու ճիշտ ուղիներ: Դասը պետք է պլանավորել փուլ առ փուլ և պլանավորման ժամանակ կարևոր է հաշվի առնել դասարանի և դասի թեմայի առանձնահատկությունները: Դասի պլանավորման եղանակների կամ մեթոդների ճիշտ ընտրությունը և մանկավարժական հնարքները կօգնեն ուսուցչին հասնել սահմանված նպատակներն: Յուրաքանչյուր դաս պլանավորելիս պետք է հաշվի առնել ուսուցչի առջև դրված ժամանակակից պահանջները: Մանկավարժը պետք է նյութը մատուցելիս աշակերտի ուշադրությունը սևեռի (ուղղորդի) դասի կարևոր հատվածների վրա և կարողանա զարգացնել սովորողների տրամաբանությունը, վերլուծությունը և պլանավորումը, հիշողությունը, ուշադրությունը և կենտրոնացումը, կամքի և բնավորության, նպատակասլացության, պատասխանատվության հմտությունները:

Շախմատ առարկայի դասավանդման ժամանակ կարևոր է, որպեսզի ուսուցիչը կարողանա աշակերտի մոտ ձևավորել ինքնուրույն որոշումներ կայացնելու, հույզերը կառավարելու, մրցակցին ապրումակցելու, համեմատելու, ստեղծագործելու, իրավիճակը գնահատելու, արագ կողմնորոշվելու, համագործակցելու կարողություններ:

Յուրաքանչյուր ուսուցիչ պետք է կարողանա մանկավարժական ցանկացած իրավիճակում և ցանկացած բովանդակության պարագայումպլանավորել և անցկացնել արդյունավետ դաս, արագ կողմնորոշվելու չնախատեսված իրավիճակներում, կիրառել մանկավարժորեն արդարացված քայլեր, համադրելով ստեղծագործական կարողությունները, մեթոդական և առարկայական գիտելիքներն ու դրանք կիրառել ուսումնական իրավիճակին համապատասխան:

Թեմայի արդիականությունը: Հին ժամանակներից մինչ օրս ուսուցչի առջև դրված կարևոր պահանջ է եղել, որպեսզի իր ձեռք բերած նվաճումները, սերունդների կողմից ստեղծված և կուտակված գիտելիքները, կարողությունները, հմտություններն ու արժեքները արդյունավետ կերպով կարողանա փոխանցել նոր սերնդին, ուստի դասի պլանավորումը և համապատասխան եղանակների կամ մեթոդների առաջադրումը միշտ էլ կարևոր է և կարևոր կլինի ուսուցչի համար: Կրթության որակի բարձրացումը շարունակում է մնալ պետության գերակա խնդիրներից մեկը: Շախմատային խաղը տալիս է անձի զարգացման հիանալի հնարավորություն: Պատահական չէ այն, որ ՀՀ կրթության նոր չափորոշչի համաձայն ՀՀ անցնում է կարողունակությունների վրա հիմնված ուսուցման: Շախմատ առարկան ավելի հեշտ, հետաքրքիր դարձնելու համար դասավանդման մեջ նոր հնարավոր մեթոդների և ձևերի կիրառում, կրթությունը ավելի որակյալ դարձնելու նպատակով: Անհրաժեշտ է պարզ գիտակցել, որ դպրոցի նպատակը կիրթ, մարդասեր, հոգևոր արժեքներով հարուստ, ակտիվ, բարձր բարոյականության տեր, հայրենասեր մարդ դաստիարակելն է: Այս բոլոր արժեքները անձի ձևավորելու գործում կօգնի և կնպաստի «Շախմատ» առարկայի ուսուցումը դպրոցում:

Հետազոտության առարկան: Հետազոտության առարկան շախմատ դասի պլանավորումը և դասի պլանավորման արդյունավետ եղանակների կարևորությունն են, որը իր մեջ ներառում է հետևյալ բաժինները՝ներածությունից մինչև «Շախմատ» առարկայի դասավանդման ընթացքում՝ ամեն ինչ շախմատի պատմությունից, մինչև ինտելեկտուալ խաղ:

Հետազոտության խնդիրներն են:

- ✓ Ինչպես վարվել ծանր իրավիճակներում:
- ✓ Նոր մտքեր և գաղափարներ առաջադրել քննարկման արդյունքում:
- ✓ Վերլուծել ստացած տեղեկությունը համադրելով սեփական կածիքը:
- ✓ Իրավիճակը գնահատելու, ճիշտ որոշումներ կայացնելու հմտություններ:
- ✓ Յուրաքանչյուր սովորողի համար հասանելիության ապահովում;

Հետազոտության նպատակները: Ուսումնասիրել դասի պլանավորման առանձնահատկությունները տարրական դպրոցի սովորողների մոտ խթանել որոնողական գործունեությունը՝ուղղված փոփոխվող շախմատային իրավիճակներում կողմնորոշվելու, գտնելու շախմատային խնդիրների լուծման տարբերակներ, զարգացնելու սովորողների կոնվերգենտ և դիվերգենտ մտածողությունը, որպես ինտելեկտի կառուցվածքային բաղադրիչ, երևան հանելով ուսուցման եղանակների կարևորությունը:

«Շախմատը» զարգացնում է մտածողության ֆոկուսային (կենտրոնացված) և դիֆուզ (ցրված) մտածողության ձևերը: Այն հնարավորություն է տալիս որոշ ժամանակ կենտրոնանալ խաղի վրա, ապա մրցակցի քայլի ժամանակ անցնել դիֆուզ մտածողության: Մտածողության երկու եղանակների այս հերթագրումը համարվում է կարևոր ՝ ուղեղի արդյունավետ աշխատանքի համար:

«Շախմատ» ուսումնական առարկայի յուրացման ընթացքում զարգանում են սովորողների մտավոր գործողությունների ներքին պլանավորման, բարդ իրավիճակներում որոշումների ընդունման, ինքնավերլուծության կարողությունները, կամածին ուշադրությունը և հուզական ինտելեկտը, ինչպես նաև վարքի

ինքնակազմակերպումը, կարգապահությունը և պատասխանատվությունը:

«Շախմատ» առարկայի դասավանդման հիմնական սկզբունքները շախմատային կրթության հասանելիության ապահովում, առարկայի ուսուցմանը սովորողների ակտիվ մասնակցություն, առարկայի ուսուցման գործնական ուղղվածությունը:

«Շախմատ» առարկայի ուսուցումը տարրական դպրոցում ունի կրթական մեծներուժ, որըպայմանավորված է հետևյալ առանձնահատկություններով.

1) Շախմատը նպաստում է սովորողների տրամաբանական մտածողության զարգացմանը:
2) Շախմատում զարգանում և կատարելագործվում է սովորողի երևակայությունը, վերլուծական կարողությունները՝ դրանով իսկ նպաստելով ուսումնական մյուս առարկաների ուսումնասիրմանը:
3) Շախմատում դրսևորվում է նպատակին հասնելու համար հետևողական և քրտնաջան աշխատանքի անհրաժեշտությունը, որը նպաստում է աշակերտի հոգևոր աշխարհի ձևավորմանը:

Շախմատը, պարունակելով գիտության, արվեստի և սպորտի տարրեր, աշակերտի մեջ զարգացնում է ինքնուրույն աշխատանքի միջոցով հաջողությունների հասնելու կարողություններ:

Արվեստի առումով այն զարգացնում է աշակերտի ճաշակը, գեղեցիկը ընկալելու և գնահատելու կարողություններ:

Սպորտի տեսանկյունից շախմատը զարգացնում է աշակերտի կամային որակները, մինչև վերջ պայքարելու, օբյեկտիվ լինելու, ճիշտ գնահատելու, ինչպես նաև արժանապատիվ պարտվելու կարողություններ:

ԳԼՈՒԽ 1. ՏԵՍԱԿԱՆ ՄԱՍ

ԴԱՍԻ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ

«Միայն այն ուսուցիչն է իր գործում հմուտ, ով լավ գիտի,թե ինչ պետք է իմանան իր աշակերտները և ինչ ճանապարհով է պետք հասնել այդ գիտելիքներին»:

Վ. Ա ՍՈՒԽՈՄԼԻՆՍԿԻ

«Լավ է շախմատ խաղալ վատ պլանով, քան առանց պլանի»

Էմանուել Լասկեր

Դասը մանկավարժական գործընթացի բջիջն է: Այն սովորողների կրթության, զարգացման և դաստիարակության խնդիրների լուծման համար պարբերաբար կիրառվող գործընթաց է, որոշակի ժամանակահատվածում ուսուցիչների հաստատուն կազմի և սովորողների գործունեության կազմակերպման ձև:

Դասը միևնույն տարիքային խմբի համար կրթության կազմակերպման ձև է ըստ որի սահմանվում է կոնկրետ օրակարգ և բոլորի համար մշակվում է միասնական կրթական ծրագիր:

Դասի ճիշտ պլանավորումը կարելի է համարել ուսուցչի մասնագիտական որակներից մեկը: Դասավանդման ընթացքում հարկավոր է մեծ ուշադրություն դարձնել դասի պլանավորմանը

- Դասի/թեմայի հստակ նպատակի կամ նպատակների սահմանում:
- Դասի հստակ փուլաբաժանում:
- Յուրաքանչյուր փուլի ընթացքի կիրառվելիք մեթոդների հակիրճ նկարագրություն:

Ուսուցման գործընթացի արդյունավետությունը մեծապես կախված է դասապրոցեսի ճիշտ պլանավորումից, որը կարելի է պատկերացնել հետևյալ հաջորդականությամբ՝ նախապատրաստական աշխատանքներ դասից առաջ, բուն դասը և վերլուծական աշխատանք, որը պետք է կատարել դասից հետո:

Դասից առաջ նախապատրաստական աշխատանքներ կատարելիս ուսուցիչը մտածում է դասի պլանավորման հետևյալ քայլերի մասին.

ա. Դասի նպատակների, ակնկալվող արդյունքների սահմանում

բ.Սովորողների կողմից նյութի յուրացման աստիճանը բացահայտող ապացույցներ

գ. Դասաժամի բուն ընթացքի պլանավորում

ա. Դասի նպատակների, ակնկալվող արդյունքների սահմանում նշանակում է, որ ուսուցիչը իր համար հստակեցնում է հետևյալը, թե ինչ ենք ցանկանում, որ աշակերտներն այս թեմայից սովորեն, որոնք են այն հիմնական հասկացություններն ու գաղափարները և չափորոշչային ինչ մակարդակ պետք է ապահովի ուսուցման գործընթացի այս փուլը, ինչպիսի վերջնարդյունքներ ենք ակնկալում: Ինչ ենք ցանկանում մատուցել, ինչ ուղիով, ինչ միջոցներով:

Յուրաքանչյուր դասի պլանավորում ենթադրում է ստեղծագործական լուրջ աշխատանքներ, որի արդյունքում ուսուցիչը գտնում և մշակում է այն ձևերն ու հնարները, որոնք ուղղված են դասի նպատակների իրականացմանը և ցանկալի

վերջնարդյունքներին:

բ. ապացույցներ,որոնք հաստատում են սովորողների կողմից նյութի յուրացման աստիճան քայլը ակնկալում է այն ուղիներն ու մեթոդական հնարները,որոնք երաշխիք են հանդիսանում սովորողների կողմից նյութի ամբողջական յուրացման համար և ապահովում են ուսուցման գործընթացի առաջընթացը:

գ. ուսուցման բուն ընթացքի պլանավորում քայլը ուսուցիչը ընտրում է նոր նյութի մատուցման եղանակը՝ առաջնորդվելով հետևյալով. ինչպիսի մեթոդական հնարների շնորհիվ սովորողների մոտ կապահովվի թեմայի յուրացման բարձր աստիճանը: Ուղղակի կապ պետք է լինի ընտրված մեթոդների և նպատակների միջև:

Դասի պլանավորումը պարտադիր է: Դասի յուրաքանչյուր փուլ պետք է միտված լինի նպատակին կամ նպատակներին հասնելուն:

Փուլաբաժանումը և մեթոդների ընտրությունը կախված են դասի թեմայից, առարկայի, դասարանի առանձնահատկություններից և կատարվում են ուսուցչի ընտրությամբ: Այն պետք է ոչ թե ձևական բնույթ կրի, այլ ուսուցչի համար ուղղորդող նշանակություն ունենա: Անհրաժեշտ է դասավանդելիս հաճախակի կիրառել համագործակցային մեթոդներ՝ չհրաժարվելով ավանդականից: Այդ մեթոդների նպատակային կիրառումն աշակերտների համար դասերը դարձնում են հետաքրքիր և նպաստում են նյութի հեշտ յուրացմանը: Պարտադիր չէ, որ յուրաքանչյուր դասի ուսուցիչն անպայման մի քանի մեթոդ կիրառի: Մեթոդների կիրառումը պետք է լինի տեղին և նպատակային: Դասապրոցեսը պլանավորելիս, կազմակերպելիս ուսուցիչները ազատ են բովանդակությունը շարադրելու, կամ օգտվելու տարբեր ուսումնաօժանդակ ձեռնարկներում զետեղված նմուշօրինակներից, ձևաթղթերից: Դասի ճիշտ պլանավորման համար անհրաժեշտ է, որ ուսուցիչն իր առջև ունենա հստակ նպատակներ և խնդիրներ: Յուրաքանչյուր դաս պլանավորելիս պետք է հստակ պատկերացնենք, թե մեր պլանավորած դասի արդյունքում որքանով ենք լուծում առարկայի չափորոշչային պահանջները, այսինքն որ վերջնարդյունքի իրականացմանն ենք նպաստում: Պայմանավորված ուսուցման գործընթացի բարդությամբ դասը պլանավորելուց շատ կարևոր է, որ ուսուցիչն ներառի երեք կարևոր խնդիր՝

- Ի՞նչ սովորեցնել, (կրթության բովանդակություն)
- Ինչո՞ւ… ի՞նչի համար սովորեցնել (կրթության նպատակներ)
- Ինչպե՞ս սովորեցնել, (ուսուցման մեթոդիկա):
-

Ի՞նչ սովորեցնել հարցի պատասխանը շախմատ առարկայի ուսուցման բովանդակությունն է, որը որոշվում է պետության կողմից հաստատված ծրագրով, դասագրքերով, աշխատանքային տետրերով որոնք կազմված են ծրագրի հիման վրա:

Ինչո՞ւ… ի՞նչի համար սովորեցնելը կարևորվում է, որովհետև ուսուցման գործընթացում յուրաքանչյուր մանկավարժ պետք է հստակ սահմանի իր նպատակները և հասնի դրանց, գիտակցորեն կատարի իր քայլերը՝ համոզված, որ ինքը ճիշտ ուղու վրա է: Այս ամենի համար ուսուցիչը պետք է քաջատեղյակ լինի առարկայի դասավանդման մեթոդիկայի բոլոր նրբություններին, համեմատի, համադրի այն մեթոդները, որոնք առաջադրվում են իրեն, կատարի մեթոդի ճիշտ ընտրություն,

հասկանա իր կատարած յուրաքանչյուր քայլի նպատակահարմարությունը:

Ինչպե՞ս սովորեցնել խնդիրը լուծելու համար յուրաքանչյուր ուսուցիչ ամեն դասից առաջ կանգնում է մի քանի կարևոր խնդիրների առջև.

- Ինչպե՞ս հաջող պլանավորել
- Ինչպե՞ս հաջող իրականացնել դասը
- Ինչպե՞ս կանխատեսել արդյունքները
- Ինչպե՞ս հասնել նպատակներին
- Ինչպե՞ս վերլուծել հաջողություններն ու բաց թողումները

Այս խնդիրների իրականացման համար ուսուցչին անհրաժեշտ է ուսուցման բազմազան մեթոդների լավ իմացություն:

1.2 ԴԱՍԻ ԿԱՐԵՎՈՐ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԸ

Դասի տիպերը: Դասը դասկարգում են ըստ դիդակտիկ նպատակների, գիտելիքների կազմակերպման նպատակների, դասի անցկացման միջոցների և բովանդակության, ուսումնական գործընթացի հիմնական փուլերի, դասի ընթացքում լուծվող դիդակտիկ խնդիրների, դասավանդման մեթոդների և սովորողների կրթական գործընթացի կազմակերպման միջոցների: Այս տեսանկյունից առանձնացվում են դասի հետևյալ տիպերը՝

1. Նոր ուսումնական նյութի յուրացման դաս
2. Գիտելիքների, կարողությունների և հմտությունների կատարելագործման դաս (յուրացված նյութի նպատակային կիրառություն)
3. Ընդհանրացման և համակարգման դաս
4. Համակցված դաս
5. Գիտելիքների, կարողությունների և հմտությունների շտկման և վերահսկման դաս:

Դասի կառուցվածքը: Ուսումնառության ընթացքում առաջացած և ուսումնական գործընթացի նպատակային առաջընթացն ապահովող տարրերի տարաբնույթ փոխազդեցությունների հանրագումարը կոչվում է դասի կառուցվածք: Ըստ կառուցվածքի դասերը լինում են՝

1. Նոր նյութի յուրացման դաս:
2. Գիտելիքների, կարողությունների և հմտությունների ամրապնդման և զարգացման դաս:
3. Կարողությունների և հմտությունների ձևավորման դաս:
4. Գիտելիքների, կարողությունների և հմտությունների կիրառման դաս:
5. Կրկնողության դաս:
6. կրկնողական-ընդհանրացնող դաս:

7. ստուգողական կամ սխալների ուղղման դաս:

8. Համակցված դաս:

1.3 ԴԱՍԻ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԵՂԱՆԱԿՆԵՐԻ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Ուսուցման մեթոդները նպատակ ունեն ապահովել կրթության բովանդակության որակյալ յուրացումը : Կրթության բովանդակությունը գիտելիքների,կարողությունների և արժեքների միասնություն է:

Ուսումնական աշխատանքի ճիշտ կազմակերպման, դրա արդյունավետության ու նպատակայնության համար ուսուցիչը, բացի իր մանկավարժական վարպետությունից և ուսուցման անհրաժեշտ պայմաններից, անպայման ձեռքի տակ պետք է ունենա տվյալ առարկայի պետական ծրագիրը, դասագիրքը կամ դասագրքերը և այդ առարկայի մեթոդիկան: Առանց դրանց վրա հենվելու, ուսուցիչը չի կարող ապահովել ուսուցման գործի ժամանակակից գիտամանկավարժական մակարդակը, ուստի այսօրվա դասը չի կարելի պատկերացնել առանց ծրագրի, դասագրքի ու մեթոդիկայի:

Ուսուցման մեթոդները հաճախ ընկալվում են որպես դեղատոմս: Երբեմն նշվում է, որ այս կամ այն մեթոդը կիրառելու դեպքում մենք կկարողանանք հասնել մեր նպատակին: Բայց մանկավարժության մեջ ընդհանրացված լուծումներ չկան:

Սովորաբար պետք է հաշվի առնել, որ յուրաքանչյուր դաս, յուրաքանչյուր դասարանում տարբեր է: Մի դասարանում աշխատելու ժամանակ մեր կիրառած մեթոդները կարող են հաջողությամբ պսակվել, բայց մեկ այլ դասարանում կարող է լինել նաև հակառակը, քանի որ հարկավոր է հաշվի առնել դասարանի առանձնահատկությունները:

Արդյունավետ ուսուցման կարևոր նախապայմանն է դասին հանգամանալից նախապատրաստվելը: Սա ենթադրում է,որ ուսուցիչը ուսուցանվող թեմային մանրամասն ծանոթանա, քայլ առ քայլ պատկերացնի դասի ողջ ընթացքը և պլանավորի այն համաձայն ստորև նշված յոթ կետերի:

1.Ներածություն/ կազմակերպական հարցեր/
2. Դասի նպատակների և ակնկալվող վերջնարդյունքների ծանոթացում
3. Նոր նյութի ներկայացում, ուսուցման գործընթացի մոդելավորում
4. Ընկալման մակարդակի ստուգում
5. Սովորողների վերահսկվող գործողությունների կազմակերպում
6. Ինքնուրույն աշխատանք
7. Գնահատում և եզրափակում:

Բուն դասը, որի ընթացքի արդյունավետ կազմակերպումը ուսուցչից որոշակի ջանք, եռանդ և մանկավարժական գիտելիքներ ու տաղանդ է ենթադրում: Դասի ընթացքը

կարելի է բաժանել երեք մասերի՝ ակտիվացման կամ խթանման, նոր գիտելիքներ ձեռք բերման և ձեռք բերած գիտելիքների ամրապնդման փուլ /ԽԻԿ/: Ճիշտ և հարմար է դասի պլանավորման ժամանակ առաջնորդվել ԽԻԿհամակարգով:

Խթանման կամ ակտիվացման փուլը դասի սկզբնական մասն է: Այս փուլի հիմնական խնդիրն է խթանելու սովորողների ակտիվ մտածողությունը, կենտրոնացնելու և դասապրոցես ներգրավելու: Այս փուլին նպատակահարմար է տրամադրել մոտ 10-15 րոպե:

Խթանման փուլի հիմնական նպատակներն են.

- Խթանել սովորողների մտածողությունը, կենտրոնացնելով քննարկվելիք թեմայի շուրջ,
- Նախապատրաստել նրանց նոր թեմայի ուսումնասիրմանը: Այն կարելի է կատարել նախորդ նյութի հարցման,ամփոփման միջոցով, հատկապես, երբ նոր թեման հնի շարունակությունն է:
- Բացահայտել նոր նյութի վերաբերյալ սովորողների ունեցած գիտելիքները:
- Ձևավորել ձգտում գիտելիքներ և հմտություններ ձեռք բերելու նկատմամբ:

Սովորողների մտածողությունը ակտիվացնելու համար այս փուլում նպատակահարմար է կիրառել մի քանի արդյունավետ մեթոդներ.

1. Քառաբաժան
2. Մտագրոհ
3. 5 րոպեանոց շարադրանք
1. 10 րոպեանոց շարադրություն
2. ԳՈՒՍ
3. Շրջագայություն պատկերասրահում
4. Պրիզմա
5. Ձնագնդի
6. Խճանկար
7. Դերային խաղեր
8. Հեղինակի աթոռ
9. Խաղ-վիկտորինա
10. Քարտային աշխատանք
11. Պոպկորն
12. Բառ-բանալի և այլն:

Դասապրոցեսի երկրորդ մասը դա այն մասն է, երբ սովորողները ուսումնասիրում են նոր նյութը: Այն անվանում են նոր գիտելիքների ձեռքբերման կամ պայմանականորեն՝ իմաստի ընկալման փուլ: Այս փուլի հիմնական նպատակներն են.

- Զարգացնել ու նոր գաղափարների նկատմամբ հետաքրքրությունը,

- Ապահովելու տեղեկատվության ընկալման ինքնավերահսկման մեխանիզմը, շաղկապելու ունեցած և ձեռք բերած նոր տեղեկատվությունը:

Դասի այս փուլին հատկացվում է ավելի շատ ժամանակահատված /20-25 րոպե/:
Դասապրոցեսի երրորդ մասը՝ երբ սովորողները արդեն ուսումնասիրել են նոր նյութը և ուսուցչին անհրաժեշտ է պարզել, թե այդ օրվա դասանյութի ո՞ր մասը նրանք յուրացրեցին դասարանում,պարզել սովորողների մնացորդային գիտելիքները: Այս փուլը պայմանականորեն անվանում են կշռադատման փուլ կամ ձեռք բերած գիտելիքի ամրապնդման փուլ,որի համար կարելի է տրամադրել դասաժամի տևողության մեկ քառորդ մասը:
Դասից հետո կատարվում է հավելյալ աշխատանք: Անհրաժեշտ է վերլուծել կատարված աշխատանքը և պարզել, թե.

- Ուսուցիչը հասա՞վ իր առջև դրված նպատակներին,
- ի՞նչ չափով և ինչպե՞ս իրականացան նպատակներին հասնելու ակնկալիքները,
- ճի՞շտ էին արդյոք ընտրված մեթոդները,
- ժամանակի բաշխումը որքանո՞վ էր իրատեսական,
- ի՞նչը կարելի էր ավելի ճիշտ կազմակերպել և ինչպե՞ս:

1.4 ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԵՎ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

Ուսուցանելիս ուսուցիչը պետք է հաշվի առնի դիդակտիկայի սկզբունքները:

1. Հաղորդվելիք նյութը պիտի գիտության մեջ հաստատված, սահմանված լինի:
2. Դպրոցական առարկայի ծրագիրը պիտի կազմված լինի հետևողականորեն: Չի կարելի անցնել, ասենք, մատը առանց շախը անցնելու: Ուսուցիչը չպետք է խախտի ծրագրային կարգը:
3. Ուսուցման ընթացքում տեսական նյութը և գործնական աշխատանքը պետք է լինեն փոխադարձ կապի մեջ: Նյութի յուրացումը ստուգվում է գործնական աշխատանքով, գործնական խաղով:
4. Ծրագրային նյութի առանձին բաժիններն ուսուցանվում են միմյանց հետ փոխադարձ կապակցության մեջ: Չի կարելի իրար հետ կապ ունեցող բաժիններն ուսուցանել իրարից կտրված:
5 Որքան էլ ուսուցումը կոլեկտիվ բնույթ ունենա (ուսուցիչը սովորեցնում է ամբողջ դասարանին), այնուամենայնիվ, նա պիտի միշտ նկատի ունենա դասարանի առանձին աշակերտների կարողությունները, ընդունակություններն ու հմտությունները, պատրաստվածության աստիճանը:

Կան աշակերտներ, որոնք իրենց ընդունակության շնորհիվ հենց ուսուցչի բացատրելու ժամանակ սովորում են դասանյութը և տանը գիրք բացելու կարիք չունեն: Ուսուցանելուց և դասապլան կազմելուց առաջ պետք է հաշվի առնել աշակերտների տարիքային

առանձնահատկությունները, բնավորության գծերը: Մի երեխան հնարավոր է խրախուսանքից ոգևորվի և լավ սովորի, մյուսը հնարավոր է գոռոզանա. նշանակում է առաջինին հարկավոր է խրախուսել, երկրորդի նկատմամբ ավելի ուշադիր լինել: Մեկը կարող է լավ հիշողությունունենալ, մյուսը՝ վատ: Դասավանդման ժամանակ պետք է նկատի ունենալ այս հոգեբանական երևույթները, հաշվի առնել, թե աշակերտը որքանով է ուշադիր կամ ցրված, դանդաղ է ըմբռնում, թե արագ, հետաքրքրվող է, թե անտարբեր, շուտ է հոգնում և այլն: Կարևոր է հաշվի առնել սովորողների անհատական հոգեբանական և տարիքային առանձնահատկությունները: Շախմատ ուսումնական առարկայի յուրացման արդյունավետությունն ապահովելու նպատակով Ս. Միսակյանն առաջարկել է հետևյալ մեթոդները՝ «Դիրքի պարզեցում», «Բացառում», «Խաղատախտակից խաղաքարերի հեռացում», «Խաղաքարի զոհաբերություն» և այլն: Շախմատի ուսուցչի կողմից այս մեթոդների կիրառումը դասերի ընթացքում հնարավորություն է տալիս զարգացնել սովորողների վերլուծական մտածողությունը, խնդրի լուծման այլընտրանքային եղանակների, տարբերակների որոնմանը: Ուսուցիչը պետք է հստակ իմանա, թե տվյալ մեթոդը գործի դնելիս աշակերտի ո՞ր կարողություններն է զարգացնում՝ տեսողական, հիշողական, արագ կամ դանդաղ մտածելու և այլն, կամ աշակերտի հոգեբանական ո՞ր առանձնահատկության վրա պետք է հենվել՝ այս կամ այն մեթոդն ընտրելիս: Մեր կյանքի կարևորագույն հարցերից մեկը՝«հաջորդ քայլը ո՞րն է» հարցն է: Մենք միշտ մտածում ենք այն մասին, թե ինչ ենք անելու հաջորդ պահին, վաղը, հետագայում: Եվ այս առումով շախմատը էապես կարող է նպաստել պլանավորման կարողությունների զարգացմանը: Յուրաքանչյուր պահի շախմատիստը մտածում է իր և մրցակցի հաջորդ քայլերի մասին: Այս առանձնահատկությունը շախմատով զբաղվող երեխաների մոտ կարող է զարգացնել իրենց կյանքը պլանավորելու հմտություններ: Ընդ որում շախմատում կարևորվում է ոչ միայն քո քայլերի պլանավորումը, այլև մրցակցի հնարավոր քայլերի հաշվարկումը:

ԳԼՈՒԽ 2 ԳՈՐԾՆԱԿԱՆ ՄԱՍ

Դասի պլան 1

Ամիս-ամսաթիվ՝ 16.11.2022թ
Ուսուցիչ՝ Ջ.Կևեյան
Առարկան՝ Շախմատ
Դասարան՝ II
Դասի թեման՝ Զինվոր
Դասի տևողություն՝ 45ր

Դասի նպատակները և խնդիրները

1. Ակադեմիական (գիտելիքներ)՝

   Ծանոթացում զինվոր խաղաքարին, սկզբնական դասավորվածությանը, նրա շարժման առանձնահատկությանը, զինվորի հարվածի տակ գտնվող դաշտերին, նրանով խաղաքար վերցնելը:

2. Սոցիալական՝

   - Խորացնել համագործակցային հմտությունները,
   - Զևավորել հաղորդակցական հմտություններ:

Ակնկալվող վերջնարդյունքները

- ✓ Ճանաչի զինվոր խաղաքարը:
- ✓ Կատարի քայլեր զինվորով:
- ✓ Կատարի կրկնակի հարված “պատառաքաղ” զինվորով:

Միջառարկայական կապեր
Մայրենի, մաթեմատիկա, պատմություն:

Անհրաժեշտ նյութեր
Գրատախտակ, ցուցատախտակ, շախմատ, տետր, գրենական պիտույք:

ՈՒսուցման մեթոդներ և հնարներ
Զրույց, մտքերի տարափ, հարցադրումներ, անհատական աշխատանք, մրցակցային ուսուցում, խճանկար, գիտելիքի բուրգ:

Դասատիպը Նոր նյութի հաղորդում

Ընթացքը՝

Դասի սկիզբ (5րոպե): Հարց ու պատասխանի միջոցով քննարկել հին դասը:

Նոր նյութի հաղորդում (7-10 րոպե)

- Մտագրոհ մեթոդով հարցնում ենք զինվոր բառի նշանակությունը:
- Ցուցատախտակին ցուցադրելով ուսցանում զինվոր խաղաքարի սկզբնական դասավորվածությունը, նրա շարժման առանձնահատկությունը, զինվորի հարվածի տակ գտնվող դաշտերը, նրանով խաղաքար վերցնելը:
- Նոր նյութի ամրապնդում առաջադրանքների լուծում (ուղղորդված աշխատանք, անհատական աշխատանք) **(10-12 րոպե)**
- Դասն ամփոփել “Խճանկար” մեթոդով: Սովորողները բաժանվում են խմբերի, յուրաքանչյուր խմբի տրվում է հարց, որոնց պատասխաններով լրացվում է խաչբառ: **(7-10 րոպե)**
- Անդրադարձ կատարել “Գիտելիքի բուրգ” մեթոդով **(5-6 րոպե)**



1.Ինչ սովորեցինք այսօր.
2.Ինչը հետաքրքրեց ինձ.
3. Ինչը մնաց անհասկանալի.

3. Գնահատում
4. Տնային աշխատանք վարժ. տետր էջ 43 տր 4

Ինքնավերլուծություն

Այս դասն օգնեց ևս մեկ անգամ հասկանալ դասի պլանավորման արդյունավետությունը՝ միայն ճիշտ և համակարգված դասն է օգնում հասնել ցանկալի արդյունքի, որովհետև դասի պլանավորման ժամանակ մեր առջև դնում ենք հստակ նպատակներ, մշակում այդ նպատակներին հասնելու ուղիներ, որոնք էլ տանում են դեպի նպատակների իրականացում:

Դասում կիրառված են եղել ավանդական և ժամանակակից մեթոդներ նաև ՏՀՏ, որոնք օգնեցին հասնել դասի նպատակներին: Այս դասից պարզ դարձավ, որ նման մեթոդների կամ եղանակների կիրառումը հետաքրքրում է սովորողներին և ճիշտ ընտրված միջոցները միայն կարող են օգնել ուսուցչին և ապահովել անհրաժեշտ վերջնարդյունք:

Դասի պլան 2

Ամիս-ամսաթիվ՝ 15. 05. 2023 թ
Ուսուցիչ՝ Ջ.Կևեյան
Առարկան՝ Շախմատ
Դասարան՝ II
Դասի թեման՝ Խաղադաշտի կառուցվածքը

Դասի նպատակները և խնդիրները

1. Ակադեմիական (գիտելիքներ)՝

Ուսուցանել շախմատի խաղադաշտի մասերը՝ կենտրոնը, թագուհու և արքայական թևերը, սպիտակների և սևերի կիսադաշտերը, եզրերը, անկյունները, սահմանային գիծը:

2. Սոցիալական՝

- Խորացնել համագործակցային հմտությունները,
- Ձևավորել հաղորդակցական հմտություններ:

Ակնկալվող վերջնարդյունքները

- ✓ **Անվանի** և **ցուցադրի** կենտրոնը,
- ✓ թագուհու և արքայական թևերը,
- ✓ սպիտակների և սևերի կիսադաշտերը,
- ✓ եզրերը,
- ✓ անկյունները,
- ✓ սահմանային գիծը:

Ընդհանրական խաչվող հասկացություններ

Կառուցվածք և գործառույթ: Ամբողջական կառուցվածք ընկալելու հմտության ձևավորում, մասնավորապես՝կենտրոն, թագուհու և արքայական թևերը, սպիտակների և սևերի կիսադաշտերը, եզրերը, անկյունները, սահմանային գիծը հասկացություններ ընդհանրացում:

Միջառարկայական կապեր

Մայրենի – Նորածանոթ հասկացությունները կարդալու, դրանք մտապահելու,սեփական մտքերը գրագետ, տրամաբանված, հակիրճ արտահայտելու կարողություն:

Անհրաժեշտ նյութեր, տեխնիկական միջոցներ

Գրատախտակ, ցուցատախտակ, շախմատ, տետր, գրենական պիտույք, lichess.org:
Learningapps.org խաղ
https://learningapps.org/watch?v=ptfktbana20

Ուսուցման մեթոդներ և հնարներ

Զրույց, պատմում, ցուցադրում, խաղային ուսուցում, անհատական աշխատանք, մրցակցային ուսուցում, ձնագնդի,մտագտրոհ:

Առաջարկվող գործունեության ձևեր

Խաղ “Գուշակիր խաղաքարը”
Learningapps.org
https://learningapps.org/watch?v=ptfktbana20

Խաղ “Ճիշտ տեղադրիր խաղաքարերը”



Խաղ “Նշված գծերը զարդարի ընդեղենով”



Ֆիզկուլտդադար
:



Դասատիպը Նոր նյութի հաղորդում

Ընթացք

1. Հաշվառում, տն. աշխատանքի ստուգում, դասի յուրացման ստուգում հարցերի միջոցով, անհասկանալի առաջադրանքների քննարկում:
2. **Նոր նյութի հաղորդում**
   - Մտագրոհ՝ խմբի ներսում կազմակերպել քննարկում:
   - Օգտագործելով նշիչները ցուցատախտակին ցուցադրել խաղադաշտի մասերը՝ կենտրոնը, թագուհու և արքայական թևերը, սպիտակների և սևերի կիսադաշտերը, եզրերը, անկյունները, սահմանային գիծը:
   - Նոր նյութի ամրապնդում առաջադրանքների լուծում (անհատական աշխատանք) մեթոդ
3. **Դասն ամփոփել "Ձնագնդի" մեթոդով՝** (զույգերով,ամբողջ դասարանով)

❖ Խաղ "Ճիշտ տեղադրիր խաղաքարերը



❖ Խաղ “Նշված գծերը զարդարի ընդեղենով



❖ Խաղ “Գուշակիր խաղաքարը”

Learningapps.org
https://learningapps.org/watch?v=ptfktbana20

4. **Վերջնարդյունքի ստուգում**
   - ✓ Քանի անկյունային դաշտ ունի խաղադաշտը:
   - ✓ Որ ուղղաձիգներն են գտնվում արքայական թևում,իսկ որ ուղղաձիգները՝ թագուհու:
5. **Գնահատում՝** ձևավորող՝ փոխադարձ , ինքնագնահատում
6. **Տնային աշխատանք** վարժ. տետր 9-10

Եզրակացություն

Կրթությունը գիտելիքների քանակը չէ, այլ լիակատար ըմբռնումն ու հմուտ կիրառումն այն ամենի, ինչ գիտես:

Դիստերվեգ

Այսպիսով, ամփոփելով կարող ենք ասել, որ դասի պլանավորման

արդյունավետությունը ժամանակակից դպրոցի գերխնդիրն է: Այս հետազոտական աշխատանքը շոշափում է մի այնպիսի թեմա, որն, անկասկած, շատ մեծ նշանակություն ունի անձի՝ հատկապես երեխաների ինքնազարգացման, ինքնաճանաչման, մարդկային բարձր արժեքներով ձևավորված անհատի զարգացման գործընթացում: Այսօր աճող սերնդի դաստիարակության գործընթացը իրականանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ժողովրդագրական, ազգային, մշակութային, ընտանեկան, կրթական, հասարակական, սոցիալական, տեղեկատվական և այլն: ՈՒսուցիչների դերը շատ մեծ է աշակերտների մեջ ճիշտ պլանավորման գործում: Հմուտ ուսուցիչը պետք է բարոյական դաստիարակության ուղիներ որոնի, աշակերտների մեջ ձևավորի բարոյական հասկացությունները ճիշտ ըմբռնելու կարողություններ: Նա իր օրինակով պետք է բարություն ու համեստություն սերմանի:

Դպրոցում սովորողները շախմատ առարկան ուսումնասիրելիս բացահայտում են իրենց գիտելիքները, ընդլայնում են իրենց մտահորիզոնը, զարգացնում են մի շարք արժեքներ:

Ինչպես նշվեց վերևում շախմատը զարգացնում է երևակայություն, վերլուծելու կարողություն, տրամաբանություն, մտածողություն, կամային որակներ, մինչև վերջ պայքարելու, օբյեկտիվ լինելու, ճիշտ գնահատելու, ինչպես նաև արժանապատիվ պարտվելու կարողություններ:

> «Գիտելիքները մարդուն կշիռ են տալիս, իսկ արարքները՝ փայլ: Սակայն մարդկանց մեծամասնությունը կարողանում է միայն փայլել, բայց ոչ կշռադատել»:

Կարլեյկ

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ա. Տեր-Գրիգորյան, Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան, 1980:
2. Կրթության, գիտության նախարարություն, Տեղեկագիր, Երևան, 2011:
3. Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ, Ուսուցման արդյունավետ հնարներ, Երևան, 2020:
4. https://innostud.am/application/library/5ced296a.pdf
5. Շախմատի ազդեցությունը ինտելեկտի վրա
6. Հանրակրթության պետական չափորոշիչ
7. Առարկայական չափորոշիչ
8. Կոստանյան Էմմա, Չարչյան Աննա "Սպասողական քայլ" ձեռնարկ